




ՓՈՒՐ ԴՐԱԴԱՐԱՆ — ԹԻԻ 1

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՍԴԵՐԼԻՆՆՈՑ

ՊԱՆՔՏՈՄԱՐ

Հեղինակ

ՄԱՌԻԳ ԴՈՒԷՆ

— 0 —

Թարգմանիչ

ԺԻՐԱՅՐ

ԱՂԲԱՆԴՐԱՎ

1904

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՍԴԵՐԼԻՆՆՈՑ

Պ Ա Ն Ք Տ Ո Մ Ս Ը

Հեղինակ

ՄԱՌԻԲ ԴՈՒԷՆ

— 0 —

Թարգմանիչ

ԺԻՐԱՅՐ

ԳՐԱՏՈՒՆ ՀԱՅԵԼԻԻ

1904

ԱԶԵԼԱՆՆԵՐԻՄ

6636 թն.

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՈՊԵԿԵՆՈՅ
ՊԱՆՔՏՈՄԱՐ

հերք 27 տարու էի, հ'ապրէի Սան—Ֆրանչիսկոյի մէջ, և կը ծառայէի հանքային արժէթուղթերու վոյս գործ ընող պանքէռի մը քով:

Աշխարհի վրայ չոր գլուխ մը ըլլալով, միայն իմ ճարպիկութեանս ու բարի համբաւիս վրայ կրնայի յոյս դնել: Այո՛, բայց հանքային արժէթուղթերը կրնային օր մը հարստութեան ճամբուն վրայ դնել զիս: Հեռանկարը կը բաւէր ինծի: Ամէն շաբաթ, Սակահարանին գոցուելէն ետքը, այսինքն կէս օրին, ազատ էի, և այդ ազատութենէն օգուտ կը քաղէի իմ առաքատաւոր նաւակով: Կտոյտ կատարելու ծովածոցին մէջ:

Օր մը, շատ հեռունները գողի և ծովին բացը բշուեցայ: Գիշերը կոխեց և փրկութեան ամէն յոյս կորուսած էի, երբ երկկայմ նաւ մը, որ Լոնտոն կերթար, ազատեց զիս: Ուղևորութիւնն երկար ու վտանգալից եղաւ: Ուղեգիրն փոխարէն պարտաւորուեցայ իբր պարզ նաւայ այնտտիլ, առանց ամենապզտիկ աւուրչէք մը առնելու:

Երբ Լոնտոն ելանք, հագուստներս ցնցոտիներու կը նմանէին և գրպանին մէջ տղար մը միայն ու-



նէի : Առաջին օրուան ուտելիքիս եւ պառկելիքիս
փարտն ելաւ , բայց հիտեալ օրս բացդեալ ճա-
շնցի ու պառկեցայ : Երրորդ օրը , գրեթէ առ-
տուան 10ին միջոյները , կարողութիւնս հասած ,
Բորչլէնտ-Բլէյտի մէջ վեր վար կը բաշխուէի ,
երբ տղայ մը , որ սպասուհիին հետ էր , զօսանքի
համար առուակին մէջ նետեց հիանալի տանձ մը :
Պատառ մը բան կըլլար վերջապէս այդ աշուր
տանձը : Բնականաբար կանգ առի եւ խոնաւ աչքս
դամուեցաւ այս արդէն թաց նեկտարին վրայ : Բեր-
նիս ջուրերը կը վաշէին : Ախրող էութիւնովս կը
բողձայի անոր : Բայց այն վայրկեանին երբ կը տրա-
մարուէի առնել , անցորդի մը նայուածքը կը կեցնէր
գիտ : Պիտի առնէի՞ թէ չգիտնի՞ առնէի : Եւ տանձն
հո՛ն էր : Վերջապէս որոշելու վրայ էի ամէն ար-
ժանապատուութիւն մէկդի թողուլ , երբ պատու-
հան մը բացուեցաւ ետեւէս ու ճնշքովն մը , բարձր
ձայնով պոսաց ինծի .

—Օհէ՛ , ներս մտէք , կ'աղաչեմ :

Պերճաշուք սպասաւոր մը մտցուց զիս ո՛չ նը-
ւազ պերճաշուք սենեակ մը , ուր յարգելի երևոյ-
թով երկու Պարոններ կային : Սպասաւորը ճամբե-
ցին ու նստեցուցին զիս .

Ճաշը նոր աւարտած էին : Սեղանին մնացորդն
բուն տեսքը միայն գրեթէ մարելիք կը լսէրէր վը-
րաս : Հալիւ կրնայի ինքզինքս բռնել այն պնակն
բուն առջեւ , որոց ձեռք դպցուած չէր տակաւին

Բայ , որովհետեւ հրաւեր եղած չէր ինձ անոնց
համար նայելու , պարկեշտ դիմք մը պահել պէտք
եղաւ :

Հիմա , ըսեմ ձեզի թէ իմ գալէս վայրկեան մը
առաջ այս սենեակին մէջ տեղի ունեցած էր խօ-
սակցութիւն մը , որուն իմաստն ետքէն հաղորդե-
ցին ինծի : Բայց ես կուզեմ հիմախ անմիջապէս հա-
ղորդել ձեզի : Այս երկու Միւսիւները , որք եղբայր
էին , առջի իրիկուն շատ տաք վիճաբանութիւն մը
ունեցած էին , զոր ի վերջոյ որոշած էին աւարտել
գրաւով մը : Ահն լաւ Միդլիաքցի համար , ինչպէս
յայտնի է , անհամաձայնութիւն մը վերջացնելու
եղանակն ա'ս է :

Անշուշտ մուցած չէք թէ Անգլիոյ Պանքան , աս-
կեց առաջ երկու պանքնոդ հրապարակ հանած էր ,
իրաքանչիւրը մէկ միլիոն քէրլիննոց , զրացի Տե-
րութեան մը հետ առեարական գործառնութիւն
մը դրուելու հանելու սահմանուած : Այս կամ այն
պատճառով այս պանքնոյններէն մէկը միայն գործա-
նուեցաւ ու ջնջուեցաւ : Միւսը տակաւին պահուած
էր Պանքային նկուղներուն մէջ : Է՛հ , այս երկու
Միւսիւները , իրենց խօսակցութեան ընթացքին մէջ ,
հարցուցած էին իրարու թէ ինչ կըլլայ կատարե-
լապէս պարկեշտ եւ ուշիմ մարդ մը , որ երկինքէն
ինկածի պէս լսնտոն եկած ըլլալ , բացարձակա-
պէս անձանթ եւ գրպանին մէջ ուրիշ բան չու-
նենայ բայց եթէ այս մէկ միլիոն սքերլիննոց

պանքնոգը, որուն ինչպէս իր ձեռք անցած ըլ-
լալը պիտի չկրնայ արդարացնել:

Մեծ եղբայրն ըսաւ թէ, ինչ պիտի ըլլայ,
անօթութենէ պիտի մեռնի: Կրտսերը պատաս-
խանեց թէ ո՛չ: Ա՛յլ յարեց թէ մարդն իր
պանքնոգը պիտի չկրնայ ո՛ր և է տեղ աւրել, ա-
ռանց անմիջապէս ձերբակալուելու: Մարդն
իբրեւ գող պիտի բռնուի: Վիճաբանութիւնը
շարունակուեցաւ այսպէս, մինչև որ կրտսերը
առաջարկեց 20,000 սգերլին գրաւ դնել որ
փնտռուած մարդն ամիս մը ամբողջ միջոց պիտի
գտնէր առանց ձերբակալուելու: Երբ իշխան
միջոց սգերլիննոց պանքնոգով:

Ա՛յլ ընդունեց գրաւն և Բ.ը ելաւ անմիջա-
պէս Պանքան գնաց ու այն տեղ մնացած մէկ
միջոցն սգերլիննոց դրամատուր գնեց: Այս Անգ-
լիացիք ուրիշ կերպ չեն ընել: Յետոյ գրասեն-
եակ դասնալուս պէս, նամակ մը գրեց, զոր
գեղեցիկ գրով մը ընդօրինակեցին, և ահա,
երկու եղբայրները, պատուհանին առջև նստած
այդ երանելի մարդը կը փնտռէին:

Հատ պարկեշտ մարդեր անցան, բայց ո՛չ սը-
րամիտ, և ուրիշ շատ սրամիտ մարդեր անցան,
բայց ո՛չ զարկեշտ: Վերջապէս այս յատկու-
թիւններն ունեցող շատ մարդեր անցան, բայց
աղքատ չէին, կամ թէև բոտ բաւականին աղ-
քատ, բայց բազմաթիւ մէջ անձանթ չէին: Միշտ

արգելք մը կեղծէր, մինչև որ զիս նշմարեցին և
Այն ատեն համաձայնեցան որ Ես ամէն պայ-
մաններն ունէի:

Ահա ասոր համար կը գտնուի հոն, այդ եր-
կու եղբայրներուն առջև, առանց գիտնալու թէ
ինչո՞ւ: Նախ քանի մը հարցումներ ըրին իմ
մասին: Պատմութիւնս ամբողջ ընել տուին և Ի
վերջոյ եղբակցացին թէ բուն իրենց ուղած
մարդն էի և ամէն պայմանները կը գոհացնէի:
Պատասխանեցի թէ անկեղծօրէն հիացած էի և
կը փափաքէի այդ պայմանները գիտնալ:

Այն ատեն անոնցմէ մին նամակ մը տուաւ
ինծի, ըսելով թէ բացատրութիւնն անոր մէջ
պիտի գտնէի: Բանալու վրայ էի, բայց իսկոյն
արգիլեցին ու պատուիրեցին որ տունս երթամ
ու խոհեմ և զգուշ ըլլամ: Հետաքրքրուած, պա-
տասխանեցի քանի մը գիտնալութիւններով,
բայց ակնից կախող չեղաւ: Դուրս ելայ սրտնե-
ղած, մտածելով որ թերեւ գուհիկ կատակի մը
առարկայ եղած էի: Բայց աղքատ ու միս-մինակ
ըլլալով, ինքզինքս բռնեցի, Հիմա պիտի առնէի
տանձը, նոյն իսկ ամենուն աչքին առջև: Բայց
ա՛յլ հոն չէր: Առե՛ր էին Եւ այս անիծեալ գէպը
էր պատճառը: Այս պահուս, գորովալից զգա-
ցումներ չէր որ կը տածէի իմ երկու մարդոցս
համար: Փողոցին անկիւնը դառնալուս պէս,
պահարանը կիսովն բացի և տեսայ որ մէջը դը-

րամ կար : Ա՛Տ, հարկ չկալ ըսելու ձեզի թէ
անմիջապէս սիրեցի երկու պատուական Միւսիւ-
ները :

Առանց ժամանակ կորսնցնելու, նամակն ու
դրամը բաճկոնակիս գրպանը դրի և ամենէն մօտ
ճաշարանը վաղեցի : Կերածս կրնաք գուշակել :
Ետոյ պանքօթս հանեցի : Պարզ ակնարկ
մը անոր արժէքն հասկցուց ինծի : Կարծեցի թէ
պիտի մարիմ : Եւէկ միլիոն սքերլին : Պլուխս
կը դառնար : Վայրկեան մը քարացած ու շա-
ցած մնացի պանքնօդին առջև, ինքզինքս գտնել
կարենալէ առաջ : Առաջին բանը զոր դիտեցի,
ճաշարանին տէրն եղաւ : Աջքը պանքնօդին տըն-
կած, անշարժ կեցած էր, հիացած, զմայլած,
շուարած, հոգի տալով և առանց կարենալու ո՛չ
ոտքը ոչ ձեռքը շարժել : — Վրան տուէք, կ'ա-
ղաչեմ, ըսի, անփութօրէն, իրեն երկնցնելով
պանքնօդը : Այս խօսքերն իրականութեան բե-
րին դինք : Խշնարհաբար ներսւմ խնդրեց որ
չկրնար վրան ալ, առանց համարձակելու ձեռ-
քն առնել պանքնօդը : Աչքերովը կը խմեր զայն
տեսակ մը պաշտումով, իբր թէ գանուած ըլ-
լար նուիրական առարկայի մը առջև, խեղճ
մարդկութեան համար անհպիլի, ըղձալի բայց
անմատչելի :

— Կը կրկնեմ, վրան տուէք, ըսի : Ուրիշ
ստակ չունիմ :

Պատասխանեց թէ ի՛նք իմ տրամադրու-
թեանս տակ էր և ստակը կրնայի վճարել երբ
որ ուղէի : Իմ դիտողութեանս վրայ թէ կրնայի
երկար առնն ալդ փողոցէն չտնցնիլ, պատաս-
խանեց որ խնդիրը կարեւորութիւն չունէր, թէ
կ'սպասէր ինձ, թէ կրնայի միշտ հրամայել
ինչ որ ուզէի և այս վարկը պիտի տէկր որբան
որ փափաքէի : Աւելցուց թէ կատարեալ վստա-
հութիւն ունէր ինծի պէս անթիմանի մը վը-
րայ, հակառակ իմ հագուստիս և այն հաճոյ-
քին զոր կ'զգայի ծպտումովս աս ու ան ծաղրե-
լով : Ձիս տարօրինակ հարուստի մը տեղ կը դը-
նէր, որ ասանկ ձեւերով կը սիրէ զուարճանալ
իրեն պէս խեղճ մարդոց հետ : — Այս պահուն
յաճախորդ մը ներս մտաւ և ճաշարանին տէրը
նշան ըրաւ ինծի որ գրպանս դնեմ քլօնտայքս
խոնարհելով մինչեւ դուռը տարաւ զիս : Ուղ-
ղակի իմ երկու մարդոցս տունը գացի, շուտով
դարմանելու համար հաւանաբար գործուած սը-
խալը, ոստիկանութեան ձեռքն իյնալէ առաջ :
Ձիդերս գրգռուած էին, նոյն իսկ մտահոգ էի,
թեեւ, ինչպէս գիտէք, բնաւ յանցանք չունէի :
Բայց մարդիկը ճանչցած ըլլալովս ապահով էի
թէ մէկու մը 20 կամ 40 սքերլիննոց պանքնօդի
տեղ միլիոննոցը չեն տար, առանց անոր դէմ կատ-
ղելու : Թեեւ իրենց անուշադրութեան նայելու են
աւելի : Ցունին մօտենալով, սկսայ աւելի հան-

դարտիլ, որովհետեւ տակնիվերադառնալուն մը չի կար: Անշուշտ, տակաւին շշմարտած չէին սը-
խալը: Դուռը դարկի: Սպասաւորն երեցաւ:
Հարցուցի թէ ո՞ւր են Միւսիւնները: — Մեկնե-
ցան, պատասխանեց ինծի ամենայն հանդար-
տութեամբ:

— Մեկնեցա՞ն: Բայց ո՞ւր:

— Կը ճամբորդեն,

— Ո՞ր կողմ:

— Կարծեմ Եւրոպա:

— Բայց ո՞ր կողմ, ո՞ր ճամբով:

— Չեմ գիտիր:

— Ե՞րբ պիտի դառնան:

— Ամիսէ մը: Ահա՛նկ ըսին:

— Ամիսէ՞ մը. ահա՛նկ բան: Միջոց տուէք
ինձ ուրեմն որ քանի մը տող գիր գրեմ իրենց,
խիստ կարեւոր է:

— Իրաւ որ, Միւսիւն, չեմ կրնար. գաղա-
փար իսկ չունիմ թէ ո՞ր կողմ գացին:

— Ան տառն, պէտք է որ իրենց ընտանիքէն
մէկը տեսնեմ:

— Ընտանիքն ալ, Միւսիւն, Նգիպտոս կամ
Հնդկաստան կը ճամբորդէ:

— Բայց, բարեկամ, խոշոր սխալ մը տեղի ու-
նեցած է: Անշուշտ այս իրիկուն պիտի դառ-
նան: Ըսէք իրենց թէ եկայ, թէ նորէն պիտի
գամ, թէ հոգեւորն չընեն:

— Կրսեմ, եթէ գան, բայց չեմ յուսար որ
գան: Ըսին ինծի թէ անշուշտ իրիկունը պիտի
գաիր տեղեկութիւն առնելու համար, բայց հը-
րաման ունիմ կրկնելու ձեզի թէ ամէն բան
յաւ է, թէ ուզած տառնին պիտի դառնան և
թէ ան տառն պիտի ընդունին ձեզ:

Առնել բախլէ զատ ուրիշ բան չէր մնար ը-
նելու: Ի՞նչ առեղծուած էր աս: Խելքս կը մո-
լորէր: Ի՞նչ կը նշանակէր սա խօսքը. — Ուզած
տառնին պիտի դառնան: Ա՛հ, նամակն անշուշտ
պիտի իմացներ ինծի: Մոռցած էի նամակը:
Ա՛ի ու հեռեկալը կարգացի:

6636 p 41

«— Դուք ուշիմ ու պարկեշտ մարդ մ'էք:
Չէր դէմքէն յայտնի է, Կը կարծենք թէ աղ-
բատ էք և այս բաղաբին մէջ բոլորովին անծա-
նօթ: Ներփակ պիտի գտնէք դրամ, որ 30 օր-
ուան համար փոխ տրուած է ձեզի, անտոկոս:
Պայմանաժամին մեր տունը բերէք: Չէր վրայ
գրաւ մը բռնած եմ: Եթէ շահիմ, ուզած պաշ-
տօնիդ պիտի տամ, կը բաւէ որ կարողութեանս
սահմանին մէջ ըլլայ և դուք ալ կարող ըլլաք
գայն կատարելու:—

Ո՛չ ստորագրութիւն, ո՛չ հասցէ, ո՛չ թուա-
կան: Ծուլա՞յ մ'էր արդեօք: Դուք, ընթեր-
ցող, գործին ետեւիւնը գիտէք: Ես չէի գիտեր:
Հանելուկն անլուծելի կ'երեւար ինծի: Գէշու-
թիւնս կ'ուզէին թէ աղեկութիւնս: Հանրային

10
պարտեզ մը գացի նստայ և սկսայ ընկերքիս վը-
րայ խորհիլ։ Ժամէ մը որոշուած տուած էի։
այս Միւսիւնները կը ծաղրե՞ն զիս թէ աղէկու-
թիւնս կ'ուզեն։ Զար չկայ գիտնալու։ Զի խո-
սինք ալ այդ խնդրոյն վրայ։ Խաղէ թէ փորձ.
Կարիքի չէ հասկնալ։ Զմտածենք վրանս։ Վեր-
ջագէս, գրաւ մը բռնուած է։ Ինտո՞ր հասկը-
նալու է թէ ինչ բանի համար է օրգանիդէափ
ենթադրութիւն ըրէ։ Բայց ինչ որ ստոյգ, ի-
րական և շօշափելի է, սա է որ պանքնօգը ձեռքս
է։ Եթէ Պանքայէն խնդրեմ հաշուընթաց մը
բանալ այս պանքնօգին տիրող հաշւոյն, (այսինքն
պանքնօգը ձգեմ ու փարա առնեմ,) աւշուշտ
կընէ, վասնզի թուղթին տիրող առնուը ծանօթ
է իրեն, թէեւ ես չեմ գիտեր։ Բայց աւշուշտ
պիտի հարցնեն ինծի թէ այդ չէքն ինտո՞ր իմ
ձեռքս անցած է։ Եթէ ճշմարտութիւնն ըսեմ,
թերեւս յիմարանոց նեաեն զիս։ Եթէ ստեմ,
չիտակ բանտ կը տանին։ Միւսնոյն արդիւնքը
տեղի պիտի ունենայ եթէ այս պանքնօգն ո՛ր և է
Պանքա մը ձգեմ իմ հաշւոյս և փոխառութիւն
ընեմ։ Ըսել է, ուզեմ չուզեմ, այս ծանր բե-
ռը պիտի քաշքշեմ հետս, մինչեւ որ այդ Միւս
սիւնները դառնան։ Այս պանքնօգը բան մը չեմ
կրնար ընել, ո՛չ իսկ ափ մը մոխիր։ Եւ պէտք
է հոգ տանիմ, պէտք է հսկեմ անոր վրայ—
ու մուրամ։ Նոյն իսկ, եթէ ուզեմ ալ, պիտի

11
չկրնամ գրեւս ճեմ ընել։ Պարկէշտ մարդ մը,
ինչպէս նաեւ գող մը, պիտի չուզեն ընդունիլ
զայն։ Երկու եղբայրները վախու բան չունին։
Պանքնօգը կորսնցնեմ ալ, այրեմ ալ, իրենք փո-
խարժէքը պիտի գանձեն միշտ Պանքայէն։ Եւ
եւս ամիս մը պիտի տառնուիմ առանց ամաւկանի
առանց չահու։ Այո՛, բայց եթէ յաջողիմ գը-
րաւը շահեցնել տալ, խօստացուած պաշտօնը
պիտի ընդունիմ։ Ահա՛ եզրակացութիւն մը որ
գործիս աղէկ կուգայ։ Բայց գրա՛ն ինչ բանի
վրայ է օ Ա՛ն ալ չգիտեմ օ

Այս տեսակ մարդերը նախանձելի պաշ-
տօններ ունենալու են իրենց տոպրակին մէջ օ
Սկսայ այդ պաշտօնն երազել, մեծ յաւակնու-
թիւններ ունեցայ օ Աւշուշտ խոշոր ամաւկան
մը պիտի առնէի։ Եւ ասիկա պիտի սկսէր ամի-
սէ մը։ Յետո՞յ, ամէն բան ուզածիս պէս պի-
տի ըլլար։ Այս մտածումներուն վրայ, պատ-
րաստ զգեստի մեծ վաճառատան մը առջեւ գը-
տայ ինքզինքս։ Ուզեցի ցնցոտիներս հանել ու
վայելուչ զգեստ մը հագնիլ օ Բայց՝ պիտի կըր-
նայի՞ օ Ո՛չ, բանի որ աշխարհի մէջ ուրիշ բան
չունէի բայց եթէ մէկ միլիոն սղերլինոց պանք-
նօգ մը օ Կերթայի կուգայի վաճառատան առ-
ջեւ, առանց որոշում մը տալու։ Վերջագէս ո-
րոշեցի։ Վաճառատունէն ներս մտայ և հար-
ցոյցի թէ պարտքի փոխարէն թողուած կամ ա-

պարուան և յիտոյ շառնուած զգեստ կա՞ր:
Պաշտօնեան, որուն դիմեցի, ուրիշ պաշտօնեայ
մը ցոյց տուաւ գլխով, առանց բառ մը ըսե-
լու: Երբ այդ պաշտօնէին բով հասայ, միեւնոյն
նշանացի պատասխանն տո՞ր և վերջապէս գացի
երրորդ պաշտօնէի մը բով, որ ըսաւ. — Վայր-
կեանէ մը. կ'աղաչեմ:

Գործն աւարտելուն պէս անկիւն մը տարաւ
զիս և թողուած զգեստ մը հանեց: Հագալօ Բը-
նաւ վրայիս չեկաւ: Բայց նոր էր և ես աւլու-
տիպողական պէտք ունէի: Ուստի, գործիս գա-
լու պէս ցոյց տուի և ըսի վեհերոս. — Գործիս
կուգայ, եթէ բանի մը օրսպասէք, որովհետեւ
վրաս ստակ չունիմ:

Բարեմիտ մարդն ամբարտաւան ձև մը առաւ,
— Ահա աք խօսքին չէի սպասեր, ըսաւ. կէ
կարծէի թէ ձեզի պէս Միւսիւ մը հաղարնոյ
պանքնօդներ ունենալու է վրան:

Բարկացայ ու պատասխանեցի. — Բարեկամս
ուրիշները պէտք չէ դատել միշտ իրենց հա-
գուսաններէն: Ձեր շնորհիւ, վրաս ստակ ունիմ
վճարելիք, միայն չէի ուզեր շփոթութիւն պատ-
ճառել ձեզ խռոր պանքնօդի մը վրան ուզե-
լով: Թերևս չկրնայիք տալ:

Մարդը բիշ մը մեղմացաւ. — Գէշ խօսք մ'
ընել չուզեցի, ըսաւ: Կրնանք փոխել ինչ պանք-
նօդ ալ ըլլայ վրանիդ: Կրնանք, Միւսիւ, կրնանք

— Լա՛ւ, կարճ կապենք, պատասխանեցի
պանքնօդն երկնցնելով անոր: Պաշտօնեան առաւ
մպտիկով, — մին այն ժպիտներէն որք դէմքին
չըջանը կընհն երկայնքէն, լայնքէն ու մէջէն խո-
ոռ թանալով, ճիշդ ինչպէս կ'ընէ մանրախիճը,
ծովուն երեսին վրայ: Եւ յետոյ նայուածքը
պանքնօդին վրայ կանգ առնելուն պէս, ժպիտը
բարաբաւ շրթունքներուն վրայ, որք զեփ դե-
ղին կտրեցան, ինչպէս հալած մետաղի այն աղ-
տիրը, որք կը գտնուին Վեսուլի կողին վրայ:
Տակաւին ժպիտի առանկ բարացում չէի տեսած:
Բարեմիտ մարդը գետինը գամուած կեցած էր,
պանքնօդը ձեռքը. — Ի՞նչ է, ի՞նչ կայ պոռաց
խանութպանը, որ մեզ նշմարեց:

— Բան մը չկայ, դիտել տուի, միայն թէ
կ'սպասեմ որ պանքնօդին վրան տրուի:

— Է՛, ինչո՞ւ կեցեր ես, Գո՛տ: Մնտուկը
գնա՛ւ աւրէ:

— Աւրե՛մ, պատասխանեց Դօտ: Ըսելը
դիւրին է, Միւսիւ: Հաճեցէք դուր ալ աչքէ
անցընել պանքնօդը:

Վարպետն ահնարկ մը ձեց թուղթին վը-
րայ եւ պերճաբոս բացագունչութիւն մը արձա-
կեց: Յետոյ զգեստներու գէլերուն վրայ յար-
ձակելով. իրարու ետեւէ վար առաւ, ինքնիրեն
խօսելով. — Տարօրինակ միլիոնատէրի մը առանկ
խղճալի զգեստ ծախել:

Ու յուզումը զսպել ջանալով շարունակեց .
 — Դօտ խեղճ է ի՞նչ է : Սա՛ նա, է : Միլիոնա-
 տերները պիտի հեռացնէ վաճառատունէս : Զը
 կրցանք սովորեցնել սրտոր միլիոնատէր մը որոշել
 աղքատէ մը : Է՛հ, փնտրածս գտայ : Ա՛յադաշեմ
 Միւսիւ, հաճեցէք մէկդի նետել այդ զգեստը
 զոր սա ձախաւոր տղան կ'ուզէր հագցնել ձեզի
 Արակը նետեցէք, Միւսիւ, կրակը : Ընորհ ըրէք
 սա գօսթիւմը փորձելու : Ո՛հ, Միւսիւ, ինչ աղ-
 ւոր եկաւ : Պարզ է, վայելուչ է, ճաշակաւոր
 է : Դուքսի մը համար շինուած էր : Ե՛հ, ոչ,
 ոչ, օտար իշխանի մը համար շինուեցաւ : Կը
 ճանչնաք անշուշտ, Միւսիւ, նորին Պայծառա-
 փայլ Բարձրութիւն հօսքօտարն Հալիֆաբաի (°) :
 Ո՛հ, ամէն ատեն չենք յաջողիր մեր առաջնա-
 կարգ յաճախորդներուն զգեստ հաւնեցնելու :
 Տօփատն հիանալի եկաւ, Միւսիւ : Հիմա բաճ-
 կոնակը նայինք : Օ՛հ, օ՛հ, կատարեալ : Պաւստ
 նայեցէք, դուք ալ նայեցէք, Միւսիւ : Հիանա-
 լի, հիանալի՛. այս գործին սկսելէօ ի վեր, տա-
 կաւին տեսած չէի չգեստ մը որ այժման աղւոր
 վայելի :

Գոհունակութիւնս յայանեցի : — Ըստ ու-

(°) Հալիֆաբա՛ քառասունի բաղաբ, Հօսքօ-
 տար : Ուրիշ իշխաններուն տիտղոսը : Մարդը
 շուտորէ է, բերնին եկած ֆօլքիթ թող կուտայ :

Ծ. Բ.

բախ եմ, երջանիկ եմ, Միւսիւ : Բայց պիտի
 տեսնէք թէ չափու վրայ ինչ սքանչելի գործեր
 կ'աւարտաստենք : Զեզ պէս անկրկնելի մը ո՛ր-
 չափ պիտի վայլէ չափի վրա կարուածը : Ըստ
 ըրէք, Դօտ : Գրիչ մը առէք ձեռքերնիդ : Ես
 ըսեմ դուք գրեցէք : — Սրունքի երկայնութիւն
 32 . . . Էն. Էն. :

Տակաւին ես խօսք մը չըսած, չափերս առ-
 նուած էին, երեկոյթի, առտոտան, կէս օր-
 ուան Էն : զգեստներու, բրտէնկօղներու, Սը-
 մօքինկներու, ֆրաքներու յանձնարարութիւննե-
 րն արձանագրուած : — Բայց, ըսի երբ ժա-
 մանակ թողուց խօսելու, չեմ կրնար այդ ամէ-
 նըն յանձնարարել ձեզ եթէ պանքօղիս վրան
 չտաք, կամ ժամանակ մը չսպասէք :

— Ժամանակ մը : Օ՛հ, ադ ի՞նչ խօսք է,
 Միւսիւ : Թողէք որ շատ տկար բառ մը ըսեմ,
 — յաւիտեան. այո՛, Միւսիւ, յաւիտեան կ'սպա-
 տենք : Ահա պատշաճ խօսքը : Դօտ, շուտով
 Երարէ՛ ամենքն ալ, Թող ճէնդլմենին ապարան-
 քը տանին : առանց վայրկեան մը ուշացնելու :
 Ը՛նտ, առէք Միւսիւին հասցէն Է . . . :

— Ո՛հ, տունէն ելնելու վրայ եմ, ըսի :
 Ես անցած ատենս կը ձգեմ նոր հասցէս :

— Ըստ լաւ, Միւսիւ, ինչպէս որ կուզէք,
 Թոյլ տուէք որ ճամբան ցոյց տամ : Մեծ պա-
 տիւ կը համարիմ ինձ եթէ նորէն տեսնեմ ձեզ :

է՛, ընթերցող, հետեւանքը կը գուշակէք:
 Բնականաբար սկսայ ինծի պէտք եղած բոլոր
 բաները գնել, պաշնօդիս վրան ուղեւոր մտն
 տեղ: Ութ օրէն, գետեղուած էի Հանօվեւ-
 Սքուէրի (հրապարակ) առաջնակարգ մէկ օդե-
 լին մէջ: Իրիկուան ճաշս հոն կ'ընէի: Բայց
 ցերեկուան ճաշի համար ամէն օր հաւատար-
 մօրէն կ'երթայի Հարիսի խոնարհ ճաշարանն ուր
 առաջին ճաշս ըրած էի մէկ միլիան սգերլիննոց
 պաշնօդիս ստուերովը: Սքանչելի ռէքլամ մը
 կ'ընէի իրեն աւապէս: Լուր տարածուած էր աս-
 մենուրեք թէ այն խորհրդաւոր օտարականը, որ
 բաճկոնակին գրպանին մէջ մէկ միլիոն սգերլին-
 նոց չէք մը ունէր, պաշտպանն էր այդ ճաշարա-
 նին: ասիկա բաւական էր անշուք խառնութեւ,
 որուն տէրը մինչեւ այն ատեն օրն օրին կ'ապ-
 րէր, ալ լաժօտ ճաշարան մը եղաւ, յաճախորդ-
 ներով խճողուած:

Կամայ տկամայ ստիպուեցայ ընդունիլ Հա-
 րիսի տուած դրամները, իբր փոխօ Գրպաններս
 ոսկիով լեցուն:

Հարուստի պէս կեանք կ'անցընէի: Կը նա-
 խառնէի թէ օր մը չէ ու մը քրաթը պիտի
 պայթէր, բայց ծովուն մէջն էի: Պէտք էր դուրս
 ելնել կամ խղճուիլ: Գիշերը, կացութեանս
 ողբերգական կողմը կ'երեւէր ինծի յստակ օ-
 սպառնալից: Քուսնս կը փսխէր: Բայց, արշա-

լոյսի առաջին շօյրերուն, մղձաւանջը կ'անհետ-
 նար խնդր լոյսի մը անոյշ ճառագայթներուն
 առջեւ: Եւ շատ բնական էր ասիկա: Աշխար-
 հի առաջին մայրաքաղաքին նշանաւոր դէմքերէն
 մին եղած էի: Անկարելի էր անգլիական կամ
 սկոտլանդական կամ իրլանտական թերթ մը ըսնալ
 առանց գտնելու անէկ միլիոն սգերլիննոց չէք
 մը ունեցող մարդունց վրայ ընդարձակ ու ման-
 րամասն տեղեկութիւններ: Անոնս որ նախ
 Քառանգան Լուրերպոսն մէջ նետուած էր, յա-
 ջորդաբար անցաւ աշնուական դասակարգերէն
 Գուբերու, Լարտերու աշնուատօհմ իշխաննե-
 րու և մինչեւ անգլիոյ առաջնակարգ պետական
 մարդոց անուններուն հետ խառնուելով: Եւ
 տականին ծայրն ենք ծրարոց: ասհա Բլոմֆ, ան-
 գլիոյ առաջին զաւեշտական թերթիք, իր ընտ-
 րեալներուն մէջ ընդունեց զիս: Եւ փոռքս
 կազմուած էր: Ծաղրանկարներ, այո՛, բայց
 գրեթէ յարգալից: Երբէք թշնամանող և կրնաք
 երեւակայել մտքի վիճակն անձանթ թարի տղու
 մը, որ ասհա խօսք մը չի կրնար ըսել ու շար-
 փում մը չի կրնար ընել: Եւ առանց շրջապատուե-
 լու տեղեկաբերներէ կամ լուսանկարներէ, որ
 դուրս չի կրնար ելնել առանց լսելու սա խօս-
 քերը. «— Կուգայ՝ կոր, կուգայ՝ կոր: Նա,
 նա: Ինքն է ու անկարելի է դուրսը ճաշել, ա-
 ռանց դրացիներու ու շարքութեան առարկայ ըլ-

լալու, և անկարելի է թաառոն երթալ առանց բողոք սրահին դիաակներուն առարկայ ըլլալու է՛՛՛՛, այո՛, օրնի բուն փառքի մէջ կը լողայիս ճակատագիրս ա՛ս էր ։ Որովհետեւ խնամքով պահած էի ղնցոտիներս, երբեմն կը հագնէի զանոնք և կ'երթայի շնչին բաներ կը գնէի մէկ միլիոն սգերլինեոց պանքնօթովս շանթահարելու համար այն խեղճ պաշտօնեան որ գէշ ընդունելութիւն կ'ընէր ինծի ։ Բայց այս խաղը շուտ հինցաւ ։ Պատկերազարդ թերթերն այնքան ընտանի դարձուած էին դէմքս, որ դուրս ելնելուս պէս բազմութիւնը կը շրջապատէր զիս ։ Եթէ խանութ մը երթայի, տէրն անմիջապէս կ'առաջարկէր խանութին եղածը չեղածը ապառիկ տալ ինծի, տակաւին ես պանքնօթս հանելու ժամանակ չսնեցած ։

Որդիականիս տասներորդ օրը պարտաւորութիւն սեպեցի երթալ մեր դեսպանն ողջունել ։ Խանդավառութեամբ ընդունեց զիս և այցելութիւնս ուղացուցած ըլլալուս համար յանդիմանեց, խնդրով ըսաւ թէ մէկ միջոց ունէի իր ներուճն ստանալու, այսինքն իրիկունը քալ մասնակցիլ իր սեղանին հրաւիրեալներէն միոյն տեղ որ պատճառով մը պիտի չկրնար ներկայ գտնուիլ ։ Ընդունեցի ։ Խառակցութեան ընթացքին մէջ հաճեցաւ յիշեցնել ինձ թէ հայրս ու ինք առենթը դպրոցակից ընկեր եղած էին ։ Յե-

տոյ դիրար գտած էին Եալի համալսարանին մէջ և միշտ պահած էին բարեկամական մտերիմ յարաբերութիւններ ։ Ի վերջոյ խնդրեց ինձմէ որ պարագոյ ժամերուս դեսպանատուն երթամ ։ Ես ալ չմերժեցի ։ յուսացածէս աւելի՛ն էր առ ։ Եթէ քիւրտիւն պատահէր, հիւրընկալս կատարեալ կործանումէ մը փրկէր զիս թերեւ, բայց ինչպէս ։ Չէի գիտեր ։ Անշուշտ միջոց մը պիտի գտներ ։ Հիմա շատ ուշ էր սիրտս իրեն բանալու համար, ինչպէս պիտի բանայի առաջին անգամ Լոնտոն գալուս ։ Ո՛ր, չէի կրնար վստահել զիս ։ Այնքան առաջ գացած էի որ աստանկ խոստովանութիւն մը չէի կրնար ընել նոր բարեկամի մը ։ Ծայրայեղ խնամք կը տանէի եկամուտէս, ըսել կ'ուզեմ ամսականներէս աւելի ծախք չընել ։ Բնականաբար տակաւին չէի գիտեր թէ ամսականս քանի՛ էր ։ Սակայն կրնայի ենթադրութիւն ընել ։ Գնահատման լուրջ հիմ մը չունէի՞ սա իրողութեան մէջ թէ գրաւը շահեցնելով, պիտի հրաւիրուէի պաշտօն մը ընտրելիմ հարուստ բարեկամներուս վաճառատան մէջ, ձեռնհասութիւնս — որուն վրայ տարակոյս չունիմ — ապացուցանելու վերապահութեամբ ։ Գրաւը շահեցնելուս վստահ էի ։ Սա ամսականին դործին նայինք ։ Ինծի կուգայ որ տարեկան 480 սգերլինին և 1000 սգերլինին մէջը պիտի ըլլայ ։ Ըսենք 480 սգերլին առաջին տարւոյն համար

և այսպէս տարուէ տարի մինչև 1000 սգերլինե-
 Հիմակու հիմա առաջին տարեկանիս միայն ի-
 րաւունք ունիմ: Ամէն մարդ ստակ դրած էր
 տրամադրութեանս տակ, բայց սակամ նա պատ-
 րուակով մերժած էի միշտ, այնպէս որ ըրած
 փոխառութիւններս հասցիւ 240 սգերլինի գու-
 մար մը կը ներկայացնէին: 240 սգերլին ալ
 ծախքերուս ու գնումներուս համար, եղաւ 480
 սգերլին: Հաշիւ կընէի որ երկրորդ տարեկանս
 մինչև ամսոյն վերջը պիտի տանէր զիս, խնա-
 յողութեամբ և կանոնաւորութեամբ ապրելով,
 ամբողջ լիննալուն, Միւսիւնները պիտի դառնային
 իրենց ձամբորդութեան և ես պիտի կրնայի պաշ-
 տօնիս գլուխն անցնելով, մուրհակներ տալ պար-
 տապահանքներուս:

Տասնընթիւ հոգինոց փառաւոր ճաշ մը տրեւ-
 ցաւ դեսպանատան մէջ: Ներկայ էին Դուքս և
 Դքսուհի Հոգրիվէյձ և իրենց աղջիկը: Լէտի
 Կրէյս Էլէօնօն, Կոմս և Կոմսուհի Պէլքօրթ,
 Դերկոմս Պոմմօրշէ, Լորտ և Լէտի Բրըտօմ,
 բանի մը երկսեռ անտիտղոս անձեր, դեսպանը,
 կինը, աղջիկը, և ասոր բարեկամուհին Միս (օ-
 րիորդ) Բոթթիա լանկամ, որ բանի մը օրէ ի
 վեր հիւր էր դեսպանատունը: Իրարմէ դոճ մը-
 նացինք ամենքս ալ: Եկնոցի պէտք չկար ասի-
 կա տեսնելու համար: Ուրիշ հրաւիրեալ մ'ալ
 կար, ամբրիկացի մը: Բայց չաճապարենք: Կե-

ցէք որ տեղն ի տեղօքը պատմեմ: Տակաւին
 սալօնն էինք և կ'սպասէինք որ ամէն հիւրերը
 հաւաքուին, երբ սա անունը ծանուցուեցաւ:

— Մտքը Լոյա Հասդինկս:

Բարի եկաքի առաջին խօսքերը փոխանակուե-
 լէ ետք, Հասդինկս նշմարեց զիս և շտակքո-
 վըս եկաւ ժպտելով ու ձեռքերը մտերմօրէն եր-
 կնցուցած: Յետոյ, ձեռքս սեղմելու ատեն,
 յանկարծ կեցաւ: — Ներողութիւն, Միւսիւն,
 ըսաւ շփոթութեամբ, կը կարծէի թէ պիտի
 ճանչնամ ձեզ:

— Ա՛հ, իրօք ալ ճանչցաք, վաղեմի ընկերոս:

— Դուք էք հա՛ն Կարելի՞ք անէ: Բայց դուք,

— Պանքնօդ ունեցող մարդն եմ, պիտի ը-
 սէիք: Եւ, այո՛, նոյն ինքն եմ: Օհ, կրնաք
 մականունս տալ: Մի՛ վախճաք, վարժուած եմ
 ես:

— Ինչ սիրուն անակնկալ: Մէկ կամ երկու
 անգամ կարդացի ձեր անունը, բայց չէի կար-
 ծեր որ իմ վաղեմի բարեկամ Հէնրի Ատամն
 էք: Վեց ամիս չընէր որ տակաւին պաշտօնեայ
 էիք Պլէք Հօրքինս պանքային մէջ, ի Սան Ֆր-
 անչիսքօ: Հիմա Լոնտոն էք, միլիոնատէր ե-
 ղած, տիեզերական դէմք մը դարձած: Հիւ-
 րաւ եւ մէկ գիշերներու պատմութիւններն
 են որ տեղի կունենան: Խելքս չի հասնիր, վա-
 ղեմի բարեկամս: աչքերուս չեմ հաւատար:

—Լ՛յտ, որչափ ալ բլլայ, ինձմէ աւելի չէք կ'ուար գարմանալ իմին ալ հաստալ՝ չի գար

—Ինչ զարմանալի բան է. ծիշդ երեք ամիս առաջ դապէրն տէ Ծին էինք միասին.

—Ո՛հ, Հօգ-Լիէս պանդոկն էինք.

—Հա՛, իրաւունք ունիք, հոն էինք. աւտըւան 2ին եկանք, քողէդ մը կ'երանք եւ գասաթ մը խահուէ խմեցինք. վեց ժամ շարունակ հաշիւներու եւ թիւերու վրայ աշխատելով վայն ի վրանիս գալէ ետք. Կը յիշեմ որ ամէն բան ըրի համոզելու համար ձեզ որ մինչեւ Լոնտոն ընկերանաք ինծի. արձակուրդ խոստացայ, բոլոր ծախքերը վճարել յանձն առի, բայց չկրցայ համոզել ձեզ. Կըսէիք թէ պիտի չի յաջողէի, թէ չէիք ուզեր ձեռքերնուդ գործը կորսնցնել. թէ զժառարութիւն կար դառնալու համար. եւ ահա հոս էք. Ինչ զարմանալի բան. պատմեցէք նախիմ ինտո՛ր եղաւ.

—Օ՛հ, պարզ գէպք մը. Մնաց որ երկուր պատմութիւն է. վեպ մը, գրեթէ երազ մը. կը պատմեմ ձեզի, բայց ոչ հիմա.

—Ե՛րբ.

—Ամսուն վերջը.

—Դեռ 15 որ պիտի սպասե՞նք. 8 օրէն չէ՛ւար.

—Կարելի չէ, սիրելիս. Բայց ձեր գործերն ինչ ջուրի վրայ են.

Այս խօսքերուն վրայ, մարդուն զուարթութիւնն ու ոգեւորութիւնը մարեցան եւ հաստ չելով պատասխանեց. —Օ՛հ, դուք շատ լաւ գուշակած էիք. Գալու չէի. Ինչ է է, չի խօսինք ա՛լ ասոր վրայ.

—Ընդհակառակն, խօսինք. այս իրիկուն իմ օդէլս եկեք եւ ամէն բան պատմեցէք ինծի.

—Իրա՛ն կ'ուզէք որ պատմեմ.

Աչքերը լեցան. —Կ'ուզեմ ձեր ամբողջ պատմութիւնը գիտնալ.

—Ո՛հ, որչափ երախտապարտեմ ձեզ, Գիտնալիք թէ ինչ ուրախութիւն է ինձ համար հանգիսիլ բարեկամի մը, որ տակաւին կը հետաքրքրուի իմ գործերուս, իմ անձիս.

Ձեռքս ուժով սեղմեց եւ զուարթ դէմք մը առաւ մինչեւ ճաշի ժամանակ, որ տեղի չունեցաւ. եւ ինչ որ պիտի պատահէր, պատահեցաւ. Նախաթողութեան վրայ համաձայնութիւն չի գոյացաւ ու ճաշը տեղի չունեցաւ. Անգլիացիք, —ամէն մարդ դիտէ աս— միշտ իրենց տունը փորերնին կը կշտացնեն ուրիշ տե՛ղ ճաշի երթալէ առաջ. Բայց օտարական մը, որ նախապէս չգիտեր, ծուղակը կիշնայ. ինչպէս սա բարի Հասդինկսը, որ ծոմ բերնով եկած էր. Բայց սկիզբէն պատմեմ. ամենքս ալ թէ

թեւի տուինք և մեր պշտիկ թափորը ճաշար-
 րահ գնաց: Հոն սկսան դժուարութիւնները:
 Հոգիովէյձի Դուքսը սեղանին մէջտեղ նստիլ
 կ'ուզէր իբր ներկայացուցիչ վեհապետի մը,
 մինչ մեր դեսպանն ալ ազգ մը կը ներկայացը-
 նէր: Իսկ ես յայտարարեցի թէ՛ ամենեւին չեմ
 հրաժարիր իրաւունքէս: Չէ՞ որ լրագիրներուն
 մէջ ազնուատոհմ իշխաններէն անմիջապէս ետք
 իմ անունս կուգար: Ծնունդիս երեսնս զարկին
 ու ըսին թէ իմ քերդաստանիս ծագումը շատ
 հին չէ: Աղւոր փաստ. այդ փաստն իրենց
 դարձուցի եւ ըսի թէ ես ուղղակի գիծով սերած
 եմ Ադամէն, որուն անունը կը կրեմ, մինչ
 Դուքսը կողմնակի ճիւղին կը պատկանի. Սոյն
 վիճաբանութեան արդիւնքը սա եղաւ որ թա-
 փորին գլուխը դէպի սալոն դաձուցինք ուր իս-
 կոյն թեթեւ ճաշ մը հրամցուեցաւ մեզի որուն
 շուրջը շարուեցանք ուղածծուս պէս. Հոն, ար-
 դարեւ նախաթողութեան պաշտամունքը նուազ
 բուռն է: Դաշն աւարտելէն եւ գովացուցիչ ըմ-
 պելիները խմուելէն ետք, խաղի նստանք, մէկ
 քառքին 5 բենայի, անգլիացիք լոկ զբօսանքի
 համար չեն խաղար երեքս: Երեկոյթն սքանչե-
 լի եղաւ, գէթ երկու հօգիտի, այն է Միս Բոր-
 թիա Ղանկամի եւ իր պաշտօնը համար. Զիս
 այնքան կապեց կախարդեց այդ աղջիկն որ ու-
 չագրութիւն չըրի խաղին. Խաղակիցս ալ այնպէս.

Բաւթին լմայած էր արդէն ու մենք նշմարած
 իսկ չէինք: Երջանիկ էինք: Մնացածը որին
 հօր. Այո՛, համարձակեցայ ըսել իրեն թէ կը
 սիրեմ. իսկ ան, է՛հ, ան կարմրեցաւ մինչեւ
 աղւոր մազերուն ծայրն ու սա խօսքն ըսաւ.
 — Օհ, այո, երեկոյթն աննման էր: Խաղին ան-
 մէն ձեռքին՝ յետ գրութեան մը կաւելցնէի և
 ան ալ կը պատասխանէր: Մնաց որ խիղճս հան-
 դարտ էր: Իրեն ըսի թէ աշխարհի մէջ ուրիշ
 բան չունէի բայց միայն մէկ միլիոն սղերլիննոց
 պանքնոթը որուն խօսքն այն աի իմացած էր:
 Բորդիան վերջնապէս իմ չէ՞ր մի: Ուստի գոր-
 ծը սկիզբէն մինչեւ վերջը պատմեցի: Ան առնն
 խնդալէն մարեցաւ, որուն պատճառը ետքը մի-
 այն հասկեցայ: Ես ալ ետքը կը պատմեմ ձեզի:
 Օրիորդը կը խնդար ու կը խնդար, այնպէս որ
 ստիպուեցայ ժամանակ առ ժամանակ կենալ: Աս-
 նունկ խնդալ տեսած չէի, տարօրինակ չէ՞ որ
 ուրիշի մը զժախտութիւնն յաճախ դուարթու-
 թիւն կը գրգռէ: ասոր հետ մեկտեղ, ալ աւելի
 սիրեցի պայն, սա մտածուով թէ կրնայի այդ-
 չափ դուարթ կնոջ մը պէտք ունենալ, Զմոռցայ
 նաեւ ըսելու թէ տակաւին երկու տարի սպասել
 պէտք պիտի ըլլար ամուսնանալու համար, մին-
 չեւ որ բոլոր պարտքերս վճարէի: Անիկա կը խն-
 դար միշտ: — Սիրելի Բորդիա, ըսի. պիտի հա-
 ճի՞ք հետս գալ այն օրն երբ ներկայանամ այդ

Միւսիւններուն օղակ մը վարանելէ ետք ըսաւ .
— Եթէ իմ ներկայութիւնս կրնայ սիրտ տալ
ձեզ , շատ լաւ օրայց աղէկ կըլլայ իմ գալստ .
Կողմ , կողմ , պոռաց յետոյ գեղեցիկ ու
ազնիւ խանդավառութեամբ : Երջանիկ պիտի ըլ-
լամ խորհելով թէ ձեր նեցուկն եմ :

— Նեցուկ , ի՞նչ կըսէք . իմ յաղթանակս
պիտի սպառնայ : Երբ դուք , որ այնքան սիրուն
ու այնքան գեղեցիկ էք , իմ քովս դնուիք , կը
կարծէք թէ երկու բարի Միւսիւնները սիրտ ու-
նենան մերժելու :

— Հասկցանք : Փաղաքուշին մէկն էք դուք ,
ըսաւ Բորգիս երեսը վարդադոյն և անուշ ժպիտ
մը գեղեցիկ աչքերուն խորը : Ձեր ըսածներուն
մէջ ճշմարիտ խօսք չկայ , բայց նորէն պիտի ըն-
կերանամ ձեզի , թերեւս այն ատեն պիտի հաս-
կնաք թէ ամեն մարդ ձեր աչքով չի տեսնուի :

Այ կրնայի՞ տարակուսիլ , ո՞չ : Օ՜թէլ երթա-
լուս , կարծես ամպերու մէջ էի և բառ մը չէի
յսեր . Հասդինկսի պատմածներէն : Յարկարածի-
նըս մտնելուս պէս ցուրտ իրականութիւնը յի-
շեցուց ինծի , սենեկիս պերճաշուք կահաւորման
առջև իր հիացիկ ձիշի , ո՞ր : — Վարկեան մը թո-
ղուցէք որ սքանչանամ , սիրելի բարեկամս , ը-
սաւ ինձ օտարաբան , ի՞նչ պերճանք :
Ահա , սիրելի Հենրիս , ձեր ծոխութեան և փա-
թամութեան ապացոյցը : Իսկ ե՞ս , կործանեցայ :

Կործանում : Այս խօսքը սարսափ պատճառեց
ինծի : Բարորակին արթնցայ երազէս և Անդուն-
դըն իմ ոտքերուն տակ ալ էր : Պարտքերու մէջ
կորսուած , առանց մէկ փառս ունենալու , ձեռ-
քիս մէջ բռնած էի սիրուն ու ամբիժ աղջկան
մը երջանկութիւնը կամ դժբախտութիւնը , և
այդ աղջկան ուրիշ բան չունէի տալիք բայց ե-
թէ առեզժուտածային պաշտօն մը , զոր թերեւ
չկրնայի ալ ստանալ . — Հենրի , ձեր օրական
եկամուտներուն աւելցուրք :

— Ձգենք օրական եկամուտներն ու սա տար
դինին խմենք ու կաղզուրիչ կերակուրն ուտենք ,
անօթի չէք , նստեցէ՛ք :

— Շնորհակալ եմ , անօթի չեմ : Գանի մը
օրէ ի վեր ամենեւին անորժակ չաւնիմ . բայց այս
իրիկուն կ'ուղեմ գինովնալ Օ'ն :

— Ես ալ ձեզի հետ եմ . պատրաստ էք , յու-
սաջ : Հիմա պատմութիւննիդ ըրէք նայիմ : Ես
գաւաթները կը լեցնեմ :

— Պատմութիւնս ընե՛լ , ի՞նչ , նորէ՞ն :

— Նորէ՛ն , ինչ ըսել կուզէք :

— Տէր ողորմեա : Ար հարցնեմ ձեզի թէ կ'ու-
զէք որ անգամ մ'ալ կրկնեմ պատմութիւնս :

— Բայց ե՛րբ ըրիք որ : Գինովցա՞ք ինչ եղաք :

— Ահ , Հենրի , հետս կիյնաք : Միթէ իմ
պատմութիւնս մանրամասնօրէն չըրի՞ երբ դեռ
պանառունէն հոս եկանք :

— Հաւատացէք որ բառ մը չի մտցար :
— Բայց նայեցէք ո՞վ է եղեր գրնովը : Դետ-
պանատունն ի՞նչ խմեցիք :

— Ես դետպանատան մէջ աշխարհի ամենէն
սիրուն աղջիկը գրաւեցի :

Այս խօսքերուն վրայ բարեկամս ոտք ելաւ,
ձեռքս սեղմեց «գինով», լսելուն համար և հաս-
կցաւ թէ ինչո՞ւ իր պատմութենէն բառ մը ի-
մացած չէի մեր վերադարձին ստեն : Յետոյ
նստաւ ու համբերութեամբ պատմեց : Ամփոփու-
մը սա էր : — Անգլիա եկած էր ծախելու հա-
մար : Կուլտ Էնտ Քլարիի էքսպէնզըն, ի բաժնե-
թուղթերը, ի հաշիւ պայմանադրներուն և ի
փոխարէն 40,000 սղիւղինի : Աշխատած էր,
ամէն միջոց գործադրած էր, ամէն դուռ զար-
կած էր և, մէկ խօսքով, ունէ-հաճը ծախսած
էր ու չէր կրցած գանձել իր փնտրած զրամա-
տէրը : Ամսուն վերջը ա՛յլ տառնն աւցած պիտի
ըլլար : Կարճ ըսելով կործանած էր : — Դու՛ր
միայն կրնաք փրկել զիս, բարեկամս, ըսաւ իբր
եղբորակացութիւն : Նոյն իսկ դուք այն միակ
մարդն էք որ կարենակ ազատել զիս : Պիտի ա-
զատէք : չէ՞ :

— Խօսեցէք թէ ի՞նչպէս :

— 40 հազար սղիւղին տուէք ինձ. նաեւ
Սան Ֆրանչիսքո երթալու ծախքս ու վար զրէք
բաժնեթուղթերը. Պիտի չի մերժէք, հէ՛ :

Իրաւ որ անձկութեան մէջ էի. քիչ մնաց
պիտի ըսէի. — «Լո՛յտ, ես փառս չունիմ ու
պարտքի մէջ կը լոյսամ» : Յանկարծ լուսաւոր
գաղափար մը աւցաւ մտքէս, փայլակի պէս ա-
րագ : Ազակս ձեռքս առի, գրամատերի մը պէս
պաղ ու ինքնավստահ. — Պիտի փրկեմ ձեզ,
Լո՛յտ. ըսի գործի մարդու մը հանգարտութեամբ :

— Ուրիմն փրկուած եմ արդէն, պոռաց
բարեկամս : Աստուած միշտ պաշտպանէ ձեզ, եւ
եթէ կրնամ, . .

— Թողէք որ աւարտեմ, Լոյտ, պիտի ազա-
տեմ ձեզ, այո՛, բայց ոչ ձեր ուղած կերպով :
Շիտակը, արդարութիւն չէ որ այնքան տառա-
պանքներ, այնքան վտանգներ, այնքան աշխա-
տութիւն անվարձ մնան : Ես հանքային արժե-
թուղթեր գնող մը չեմ, լոնտոնի պէս կարեւոր
կեդրոնի մը մէջ կրնամ իմ զրամագլուխս դի-
րութեամբ գործածել : Արդէն ամէն օրուան ըղ-
բաղումս աս է : Բայց տեսէք թէ ի՞նչ պիտի ը-
նեմ : Չեր հանքը մօտէն կը ճանչնամ և անոր
արժէքը դիտեմ : Ուստի կրնամ երաշխաւոր ըլ-
լալ : Տասնըհինգ օրուան մէջ 120,000 սղիւղի-
նի կը ծախէք այդ թուղթերը, իմ անունս տա-
լով իբր երաշխաւորութիւն : Մէջերնիս կը բա-
նենք շահը :

Ահ, եթէ տեսնէիք թէ բարեկամս ինտոր ըս-
կաւ ցատկըտել ուրախութենէն : Յետոյ պա-

տառախանեց հանդարտ ու երջանիկ. — Կարածներ
գիտ, հա՛, ձեր անունը տալ իբր հրաշխաւորու-
թիւն: Ի՞նչ ուրախութիւն: Օհ, բարեկամս, ա-
ղաւթներու երածի մը պէս մեր գլխուն պիտի
թափին Լոնտոնի մեծահարուստները: Իրարու
հետ պիտի ծեծկուին բաժնեթուղթերու տըր-
ցակներ տնեղու համար մեղմէ: Ահա նպատա-
կիս հասայ, այո՛, առ յաւետ հասայ Նպատա-
կիս: Երբեք պիտի չմոռնամ ձեր բարիքը, եր-
բէք, մինչև կենացս վերջը:

Քսանէնորս ժամ չբշտծ, ամբողջ Լոնտոն ե-
ռուչիղումի մէջ էր: Ա՛յ ուրիշ բան չունէի ը-
նելիք, բայց եթէ օգէլը կենալ ու եկող այցե-
լուներուն ըսել. — Այո՛, արածուած է, իբր
հրաշխաւորութիւն իմ անունս գործածել: Ըսած
հանքը գիտեմ ու մարդն ալ կը ճանչնամ: Մար-
դուն նկարագիրն ամէն կասկածէ վեր է, և
այդ հանքը ուղուած գինէն աւելի կարժէ:

Իրիկուններս Բորդիայի հետ կանցնէի դեսպա-
նատան մէջ. անակնկալ մը ընելու համար, այս
հանքին գործը պահեցի իրմէ, մեր խօսակցու-
թիւնները միշտ մեր սիրոյն ու մեր խորհուրդ-
ներուն, ծրագիրներուն վրայ կը դառնային: Ի-
բրաւ, շատ սիրուն բան էր շահագրգռութիւնը
զոր դեսպանուհին ու աղջիկը կուտային մեր
պատիկ գործին, և այն հիանալի դարձուածք-
ները զոր կը գտնէին մեր գլուխ — գլխի տե-

տակցութիւնները չընդմիջելու և գործը դեսպա-
նին չիմացնելու համար:

Երբ վերջապէս ամիսը լրացաւ, Լոնտոն էնտ
Քսանէնորի Պէնքի մէջ մէկ միլիոն տոլար ունէի:
Հասցինկս ալ նմանապէս:

Հագուած չբուած, ելայ Բորդէնզ Բլէյս
գտցի, և տունին երեւոյթէն հանդիպալ թէ երկու
Միւսիւնները եկած էին: Ըստով դեսպանատուն
դարձայ, սիրեցեալ գանձս տնեղու համար:

Ճամբան, պաշտօնիս խօսքն ըրիսք. — Միւս-
ի բարեկամուհին, ըսի, իրաւ որ ոճիւր մըն է
երեք հազար քգերիլինի թուշակէս մէկ բէնտ
պակեցնել, քանի որ ձեզի պէտ աղւոր ընկե-
րուհի մը ունիմ: Մի՛ վախճաք: Ատաւ հուլթիւն
ունեցէք իմ վրաս: Ամէն բան աղեկ պիտի վեր-
ջանայ. կը տեսնէք —:

Բայց որովհետեւ տունին մտեցանք, հարկե-
ղաւ նորէն սիրտ տալ անոր: Միշտ կըսէր ինծի.
— Կաղաչեմ, աւելի չուղենք, կրնայ ըլլալ որ
ամենեւին ձեռքերնիս բան մը չանցնի, ան ա-
տեն ի՞նչ պիտի ըլլանք, ի՞նչ պիտի ընենք ապ-
րուստնիս շահելու համար —

Նոյն պերճաշուք սպասաւորն էր որ այս ան-
գամ ալ ներս տարաւ մեզ: Երկու յարգելի Միւ-
սիւնները նստած էին. քիչ մը դարմացան կարծես
այս գեղանի աղջկան հետ տեսնելով զիս:

— Անպարկեշտ բան չի կայ միւսիւններ, ըսի:

39
Օրիորդն իմ նշանածս է, և ապագայ ընկե-
րութիս ։

Բորգիան ներկայացուցի իրենց և զիրենք ալ
Բորգիայի ։ Անունին տուած ատենս պարմացան,
խորհելով թէ ֆարեյոյի մը մէջէն դառն ըլ-
լալու եմ ։ Բարեսիրաբար նստեցուցին միմե-
կրցածնին ընելով Բորգիայի հանգստութեան
համար ։

Այն ատեն ըսի իրենց ։ — Միւսիններ, պատ-
րաստ եմ հաշիւս տալու ։

— Խիստ լաւ, պատասխանեց ճենդիմէնը ։ Ը-
սել է հիմա ես ու Աբէլ եղբայրս պիտի կրնանք
որոշել թէ մենե ո՞վ շահեցաւ գրաւը ։ Եթէ ես
եմ, ուրիշ պաշտօննիդ պիտի տամ ։ Մէկ մի-
լիոն սղերլինոց պանքնօդը բովերնիդ է ։

— Աւասիկ, Միւսիւ, ըսի և պանքնօդն ի-
րեն տուի ։ — Շահեցայ, պոռոց, ընտանեբար
զտրնելով Աբէլի ուսին ։ Ի՞նչ եղբայր, ի՞նչ կ'ըսես ։

— Ի՞նչ ըսեմ, 20,000 սղերլինի գրաւս կ'ըս-
անցուցի ։ Երբէք չէի կարծեր ։

— Դեռ ըսելիք ունիմ ձեզի, Միւսիւներ, կը
հաճի՞ր ուրիշ ունկնդրութիւն մը ալ շնորհել
ինձ, որպէս զի մէկ ամսուան մէջ բրածնեղս
պատմեմ ձեզ ։ Կարծե՞ մտիկ ընել ։ Հիմակու հի-
մա հաճեցէք սա ծրարս բնեղ ։

— Աս ի՞նչ է ։ Կարելի՞ բան չէ, բայց հազար
սղերլինի Պանքայի աւանդագիր մը, ասիկա

35
ձե՞րն է ։

— Հապա որի՞նք պիտի ըլլայ ։ Ես ինքս շա-
հած եմ գայն 30 օրուան մէջ, շնորհիւ այն
փոխատուութեան գոր հաճեցա՞ք ընել ինծի ։
Պանքնօդիս վրան ուղեւորվ, շատ բաներ գնեցի,
ծախեցի և շահեր ըրի ։

— Զարմանալի, անհաւատալի ։

— Ճշմարտութիւնն ա՛ս է, հաւատացէ՛ք ։

Զարմանալու կարգն հիմա Բորգիային եկաւ ։

— Հէնրի, այս ստակները բու՛կդ են ։ Ուրեմն
խաբեցիր զիս ։

— Է՛հ, այո՛, սիրեցիալ բարեկամուհիս, բայց
պիտի հաճիք ներել ինձ ։

— Այդքան ապահով մի ըլլա՛ք, պատասխա-
նեց յօնքը սանկ բիւ մը պոստելով, ինչո՞ւ ինձ-
մէ պահեցիր ։

— Օհ, հաճեցէք ներել, Բորգիա, կաղա-
չեմ, պարզ կատակ մ'էր ։ Եկէք երթանք, ե-
թէ կ'ուզէք ։

— Դեռ ո՛չ, ըսաւ ճէնդիմէնը և կեցուց զիս ։
Կարծեմ թէ պաշտօն մը պիտի տայի ձեզ ։

— Հազար ջնորհակալութիւն, Միւսիւ ։ Ան-
հունապէս երախտապարտ եմ ձեզ ։ Պաշտօնի
պէտք չունիմ այլևս ։

— Բայց տրամադրելի պաշտօններուս ամենէն
աղւորը պիտի տամ ձեզի ։

— Նորէն ի սրտէ շնորհակալ եմ ատոր հա-

մար ալ Բայց պէտք չունիմ, Տիրութեան, ալ պէտք չունիմ:

— Էէնրի, կը շփոթեցնէք զիս. Պէտք եղածին չափ շնորհակալ չէք բլլար անքան բարի, անքան սիրուն այս Միւսիւններուն: Ես կրնամ ձեր տեղը շնորհակալութիւն յայտնել:

— Տարակոյս չիկայ, սիրելի Բորգիաս. անշուշտ զուրք աւելի լաւ պիտի բնէք:

Բորգիաս Միւսիւնին քով վազեց, անոր ծունկերուն վրայ նստաւ, և թեր վզին նետելով ողջագօրից զայն: Ան առան երկու Միւսիւններն սկսան բահ բահ խնդալ:

Կրնաք երեւակայել թէ շուարած, գրեթէ բարացած ձեացեր էի: Բայց Բորգիաս պոռաց. — Հայրիկ, ըսաւ թէ իրեն յարմար պաշտօն մը չունիք: Ասիկա ծանր եկաւ ինծի:

— Բայց սիրեցեալ բարեկամս Տիս, Միսիւն ձեր հայրիկն է եղեր:

— Այո, այո, իմ սիրեցեալ հայրիկս է: Հիմա կը հասկնաք, չէ, խնդալներուս պատճառ, երբ, առանց ընտանիքս ձանձալու, դեսպանատան մէջ ինձ պատմեցիք թէ ի՞նչ շփոթութիւններ ու մտահոգութիւններ պատճառած էր ձեզ սիրեցեալ հայրիկիս և Աբէլ հօրեղբորս գրուել:

Գործը կարճ կապելով, ուղղակի նպատակիս դիմեցի. — Յոյժ սիրեցեալ աւէր, թոյլ տուէք որ

խօսքս շարունակեմ, բոլի. դուք ձեր տրամադրութեան տակ ունիք պաշտօն մը, զոր պատիւ ունիմ խնդրելու:

— Ընէ՛ք, ի՞նչ պաշտօն:

— Փեսայի պաշտօնը:

— Հաս լաւ, բայց եթէ տակաւին այդպիսի պաշտօն մը չէք կատարած, կրնաք պէտք եղած տեղեկութիւնները տալ ձեր մասին, և այս կերպ գով. . .

— Օ՛հ, կ'աղաչեմ, առանց պայմանի ընդունեցէք զիս: 30 կամ 40 տարի փորձեցէք զիս և եթէ. . .

— Աղէ՛կ, աղէ՛կ, ալ ուրիշ բան չենք ուղեր ձեռնէ: Անէ՛ք մեր աղջիկն ու երջանիկ եղիք:

Թէ ի՞նչ գբացի այս պահուն. չեմ կրնար բառերով բացատրել ձեզ: Դուք ինքնին երեւակայեցէք: Եւ երբ լնտանցիք, երկու երեք օր ետք, մանրամասնութեամբ իմացան միաժեսայ ոգիտականիս պատմութիւնը, որ ահա վերջացած էր, կրնաք երեւակայել թէ որքա՞ն խօսեցան մեր վրայ:

Բորգիայի հայրն Անգլիոյ Պանքայիս զրկեց բարերար ու երջանկաբեր պահելոգի, զոր պանքան ընեց, բանի որ այլ ևս բանի մը չէր ծառայեր, փոխարէնը մեր հաշուընթացին անցած ըլլալով:


Անգլիոյ պանքան նոյն պանգնոգի թուղթն իրր նուէր տուաւ Բորգիայի հայրիկին, որ մեր

ամուսնութեան օրը մեզ բնծայեց։ Ընկե ի վեր
մեր տան ամենէն նուիրական տեղը կախուած է
տն, շրջանակի մէջ առնուած։ Այդ պանքնոգին
կը պարտիմ Բորդիաս։ Եթէ ան չլլար, Գհս-
պանտուն պիտի չերթայի և հաւանաբար եր-
բէք պիտի չհանդիպէի անոր։ Այդ պանքնոգը
ցոյց տալով կըսէի միշտ։ — Այո՛, ահա մէկ մի-
լինն սքեւրլիննոց պանքնոգ, որ մէկ անգամ
ճառայեց ինծի, եւ ան ալ, տասն անգամ ա-
ւելի արժող գնում մը կատարելու համար։

ԱԵՐԶ

Որոշած ենք ամէն 15 օրը անգամ մը
տարակեր ասոր պէս հետադրեալաճ վեպիկ
կամ 40 էջերէ բաղկացած, յետոյս ըլլա
պէտք եղած քաջայերու թիւնը պիտի գտնեն
թերցող հասարակութեան կողմէ:

Գին 40 սանդիմ կամ 60 փարա ող



4-H. 10-65

No 6636